

Միացնալը-Նանանգաց երկրագործական հասարակին տարեկան հալիւր ցոյց կու տայ, թէ ատ մը փորձեր կատարուած են ըամբակի, էլի, ցորենի և պտուղի մշակութեան եղանակներուն վրա, մեծ արդուղութեամբ։

գեղեցկացնելու, մասնագէտներ անընդհատ աշխատութեամբ կրցեր են տեսակներ յառաջացնել, որոնք կատարեալ կը սեպուին. անցեալ տարի յայտնի եղեր է, թէ այդ տեսակները անփոփոխ են: Հարաւային Աֆրիկէ և Եգիպտոս հիմա Ամրիկայի մրցակիցներն են. նախաբար կը յայտնէ, թէ իր երկրին բամբակը պէտք է գերազանցէ աշխարհի ամեն կողմերու բամբակները: Յորինու համար կատարուած փորձերու արդիւնքը աս է. եսպոնական և ռուսական ցորեններէն կարելի եղեր է նոր տեսակ մը արտադրել, տեսակ մը նոր ցորեն, որ երկուքին յատկութիւնները կը միացնէ, ամբողջիւն և կանուխ հասնիլ:

Ամերիկեան պտուղները Եւրոպա զրկելու միջոցներուն վրա մտածելու և կառավարութիւնը: Մեթոդներ գտեր են պտուղը անդուկին մէջ դնելու, օդէն և տաքութենէն պաշտպանելու. կարելի է եղեր շատ պտուղ արտադրել հարուստ շուկաներէ: Եւրոպայի քննարկել թէ երկրագործական նախարարութեան յատկացուած դրամը թոյլ տայ, եկող տարի յատուկ մարդիկ պիտի զրկուին Եւրոպայի գնաւաճառ շուկաները ռուսականներէն, պահանջները քննելու և այսպէս ասպարէզ բանալու հետզհետէ ծաւալող պարզամակութեան համար:

Հետեւել թւանշանները ցոյց կուտան, թէ ինչքան խոշոր արտադրութիւն ունի Միացեալ Նահանգաց հողը:

1900 թւին երկրագործներուն կայուն դրամագումար եղեր է քան հազար միլիոն. երկրին մէջ կան 5,000,749 ագարակ, 841,000,000 արտադար հողով: Մարդահամարի հաշուով ագարակները կը բնակին 40,000,000 մարդիկ, այսինքն բնակչաց կէսէն աւելին գործողներու 29,000,000 թիւէն 10,000,000 երկրագործական աշխատութեամբ կը զբաղին:

Աս դրամագումարը և աշխատութիւնը արտադրեր են 1899 թւին 5 հազար միլիոն տօլար, որուն մէջ են:

Եգիպտացորեն.	828,000,000	դօլար
Խոտ	484,000,000	»
Բամբակ.	324,000,000	»
Ցորեն	217,000,000	»
Կենդանի և միս	900,000,000	»
Կաթնատուտ. արտադ.	472,000,000	»
Հաւ և հակիթ	217,000,000	»

Արմէն

ՆԱՄԱԿ ՊԱՐԱՎԱՍՏԱՆԻԺ

Թէհրան, գեկտեմբերի 1-ին

Ես չը կրցայ ժամանակին հարորդելու, որ Հասանապատ թաղի նորակառոյց ռուսամարմանը բացկցաւ—թէպէտե քիչ մը ուշ: Արդէն 60-ի մօտ աշակերտ և աշակերտուհի ունի: Եթէ դպրոցական տարւման սկիզբը բացկցած ըլլար, ապահովաբար աշակերտներու թիւը կրկնապատկուած պիտի գտնէինք: Շատ ծնողներ՝ կասկածելով, որ մի գտնէ վարժարանը չը բացվի, իրանց զաւակները յանձնել էին օտարին:

Բաղքական և կաթօլիկ միաբնակարանները վարժարանը նոր միաբնակարաններ և մայրապետներ հրաւիրած են: Կաթօլիկներու վարժարանը ձրի է, իսկ ընդհանրականը տարեկան 5 թուման ռոճիկ կը պահանջեն իւրաքանչիւր աշակերտէ:

Ոչ ոքին գաղտնիք է թէ միաբնակարան դաստիարակութիւն ստացած հայ աշակերտը ոչ միայն մեր ցեղի կրթութիւնէն բոլորովին զուրկ է, այլ և զուրկ է քաղաքացիական ամենատարրական կրթութենէ: Այս իրողութիւնը՝ ամենուրեք յայտնի, չէր վրդոված սակայն այն հայ ծնողները՝ որ իրենց զաւակը օտար լեզուի մը տիրացած տեսնելու բողոքներէն միջոցով կը յամառէին ուղարկել զանոնք օտար վարժարան, մանաւանդ կաթօլիկներու վարժարանը:

Ամեն ազգի աշակերտի համար ամենէն զիւրուայց լեզուն է իր մայրենի լեզուն: Հայը հայերէնը, ֆրանսացին՝ ֆրանսերէնը, իսկ չինացին՝ չինարէնը կը սորվի ամենէն աւելի հեշտութեամբ:

Հետաւար, երբ հայ աշակերտը կը փափաքի ու է օտար լեզու կանոնաւորապէս սորվիլ, հարկաւոր է, որ կանոնաւորապէս գիտնայ իր մայրենի լեզուն տարրերը:

համար որ հայ լեզուն, հայ կրօնը, օ մանաւանդ հայ կրօնը, կը տուեն Ո՛հ, ես կառաջնորդվում միմիայն մարդկային, նիւթական, զրական տեսակետով: Ամեն ծնողը իր զաւակը ռուսամարման կուղարկէ, որպէս զի ռուսամով իր զաւակը կեանքի կոխին պատրաստվի, որպէս զի ապագային կարող ըլլայ իր հացը ձարելու: Արդ, երբ օտար վարժարանները իրենց վրա զրկած յոյսը չեն արգարացնի, ամեն չինացին է երան հանել խաբէութիւնը, խաբիողը զգուշացնել ծուղակէն: Եթէ օտար վարժարանները իսկապէս ծառայէին իրենց նպատակին, ոչ ոք անարարեւելութիւնը պիտի ունենար իրենց ջարհ տեսելու: Ասիկա թող գիտնան ամենքը:

Ու բանից դուրս է գալիս՝ որ թէհրանցի հայ աշակերտը ոչ միայն ֆրանսերէնը չի սորվիր կաթօլիկներու մօտ, այլ և սորվածը ֆրանսերէնէ զատ ամեն բան է: Կաթօլիկներու վարժարանէն միշտ եկող աշակերտները ու առանց բացառութեան բոլոր աշակերտները այսպիսի առողջանութեամբ, այսպիսի արտասանութեամբ կը կարդան, որ մարդ չուրաքած կը մնայ: Մէկ կողմ ձգեցէ՛ք ձեզային արտասանութիւնը, որ գլխաւոր է, և չեղտաւոր լեզուներու չեղտին չափ կարեւոր է, ինչպէս, օրինակ, enfant, maman, dans և այն տեսակ բառեր, ուր (n) տալին մօտ (e) տալը չը կայ, այլ և շատ աղաւթով և սխալ կարտասանեն կարգ մը բառեր, ինչպէս heure, malheur, bonheur և բոլոր է օ n և է օ հնչուածով բառերը:

Ու ցաւալին այն է, որ երբ աշակերտին լեզուն այդ հնչուածներուն պատկած է, այլ ևս գրեթէ անկարելի է զայն ուղղել:

Ահա իմ խրատն հայ ծնողներուն:

Բայց տարակոյս չը կայ թէ առաջիկայ տարի նոր ռուսամարմանը աշակերտներուն թիւը պիտի կրկնապատկուի, որովհետեւ, ինչպէս յայտնեցի վերը, այս տարի վարժարանը ուշ բացվեցաւ:

Յ. Գ. Յէլէկեան քոյրերը՝ օր.օր. Հրանոյշ և Վարդիթի երկու օրէ ի վեր կը գտնվին թէհրան և մտադրել են կարգ մը հայերէն և պարսկերէն ներկայացումներ տալ: Ապահովաբար, կը խաղան Շոմի ներկայութեամբ, պալատական բեմի վրա: Յարմար առիթով կը գրեմ անոնց գործունէութեան և թէհրանցիներէն գրտած ընդունելութեան մասին:

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—«Mouvement Macédonien» լրագիրը շատ մտալ աչքով է նայում Մակեդոնիայի մերձակայ ապագայի վրա, չը նայելով եւրոպական դիպլոմատիայի միջամտութեանը և թիւրքիայի իր թէ ընթացիկ մոցներու պատրաստակարանութեանը: Լրագիր կարծիքով, եւրոպական դիպլոմատիան զեռ ոչ մի լուրջ քայլ չէ արել Կ. Պոլսում ի նպատակ մակեդոնացիներին Ընդհանրականը, նա մինչև անգամ իսրայիւստում էր սուլթանին աւելի խիստ միջոցներ ձեռք առնելու ապագամոված երկրի քրիստոնէաների դէմ, որոնց գործողութիւնները դիպլոմատիան անուանում էր «պարօն», ուղղված օրինական իշխանութեան դէմ: Բաւական է արտասանել սուլթանի ներկայութեամբ կամ յայտագրի մէջ այդ խօսքերը, և անա թիւրքաց կառավարութիւնը հիմք ունի արգարացնելու թիւրքերի կատարած գաղտնութիւնները Մակեդոնիայում: Բոլորովին աւելորդ է խօսել թիւրքաց ընթացիկների հրատարակած նախադէի մասին, քանի որ եւրոպական մամուլն արդէն բաւական խօսեց դրա մասին, ծաղրելով և կատարեալ կակաւածով վերաբերվում թիւրքերի խոստանալներին: Մեզ այս րօպէսն հետաքրքրում է այն երեւոյթը, որ մակեդոնացիները վիճակով հետաքրքրող պետութիւններից մէկը մինչև այժմ ոչ մի խօսք չստաց այն մասին, թէ ինչ երաշխաւորութիւն է տալիս թիւրքիան, որ չիրաւի Մակեդոնիայում կը մոցնվին այն բարենորոգումները, որ նա խոստանում է: Այն ինչ, 20 տարի առաջ Կ. Պոլսում գումարված եւրոպական կոնֆերենցիայում հանդիսաւոր կերպով յայտնվեց, որ առանց երաշխաւորութիւնների անհնարին են որ և է բարենորոգումներ թիւրքիայում: Կոնֆերենցիան այն ժամանակ արդէն որոշեց, որ թիւրքիայի տուած երաշխաւորութիւնը պէտք է երկու տեսակ լինի. նախ՝ Բ. Դուռը պէտք է պարտաւորվի ընդհանուր-նահանգապետ նշանակել մեծ պետութիւնների ներկայացուցիչների համաձայնութեամբ, երկրորդ՝ պէտք է հիմնվի վերապետութիւն յանձնաժողով, բաղկացած մեծ պետութիւնների հիւպատոսներից: Թիւրքիան դրան պատասխանեց, որ չէ կարող համաձայնվել ընդունելու այն պայմանի երաշխաւորութիւն, որպէս մի միջոց, որ «անհնարապատասխան է անկայն պետութեան արժանաւորութեանը»: Ընթացիկ մոցներու համար կազմված եւրոպական յանձնաժողովը 1880 թւին երաշխաւորութեան հարցը ապագայ կարգադրեց, որ թիւրքիայի արժանաւորութեանը ոչ մի մնաց չը հասցնվի. նա առաջարկեց, որ

առանց մեծ պետութիւնների համաձայնութեան 5 տարով նշանակված ընդհանուր-նահանգապետին տրվին ընդարձակ իրաւունքներ, որ նա չը գտնվի Բ. Դուռն և մինչև անգամ սուլթանի հնչման տակ: Մի և նոյն ժամանակ յանձնաժողովը մշակեց 17 կետերից բաղկացած ընթացիկների մի ծրագիր: Մակեդոնիայի համար, որոնք և պէտք է մոցնվին անխախ ընդհանուր-նահանգապետի ձեռքով: Թիւրքիայից խրվեց առիթը յանձնելու, և Մակեդոնիայի ազգաբնակչութիւնը սպասում էր, որ այսօր կամ վաղը նոր դարաշրջուն կը սկսվի երկրում: Այն ժամանակից սակայն 22 տարի անցաւ և մինչև այժմ ոչ ոք չը գիտէ, թէ ինչ եղաւ այդ նախադէի:

—Թուաց արտաքին գործերի մինիստր կոմս Լամարգորֆի ճանապարհորդութեան առիթով «Temps» լրագիրը իր առաջնորդողում գրում է. «Համարեա ոչ մի կասկած չը կայ, որ ի նկատի առնված է մակեդոնական հարցը կամ, դատելով աւելի ընդհանուր տեսակետով, Բալկանեան թերակղզու խաղաղութիւնը պահպանելու: Չը նայած սուլթանական քաղաքականութեան պաշտօնական և կրտապաշտական օրգանների հաւատարմութեանը և հրամայված լաւատեսութեան, աւելի և աւելի հաւանութիւն է դառնում, որ զրուցիւնը Մակեդոնիայում չէ լաւանում: Արդուր-Համիդը շատ առնա՞ց է և նա յանդիմանում է իր մեծ վեզիր Սալիլին, որ նա անհրաժեշտ միջոցներ ձեռք չառաւ: Այնուհետեւ ֆրանսիական լրագիրը ասում է, որ Բոլցարիտյում և առհասարակ սլաւոնական երկրներում ներկայումս մեծ ոգևորութիւն է տրուում զէպի Ռուսաստանի: Բոլցարիտյում Սօբանիէն իր նախագահի միջոցով հեռագիր ուղարկեց ռուսաց ծախին, ինչպիսիք նրան մակեդոնացիների պաշտպանը դառնալ: «Այս բոլոր փաստերը Եւրոպայում առաջադրում են ընդհանուր յուզմունք և ակնկալութիւններ»:

—«Temps» լրագրին հետադրում են Կ. Պոլսից մակեդոնական ընթացիկների անգլիական ծրագրի մանրամասնութիւնները: Անգլիական գեղապետը խորհուրդ է տուել սուլթանին նշանակել Մակեդոնիայում քրիստոնէայ նահանգապետ և առաջարկել է Ալեքսանդր Կարաթէօօրի փաշային: Սուլթանը յայտնել է, որ այդ փաշան շատ տարիքաւոր է, բայց համաձայնել է նշանակել նրան ընթացիկների յանձնաժողովի անդամ:

—Պարբերից գրում են «Pro Armenia» լրագիրն, որ թիւրքերը միշտ անուանում էին իսրայիւրի գաւառը՝ «Իսրայիւր օվախ»—այլ թուն իւլախ» (Պարբերից գրում ունի լուրն է), նրա պտղաբերութեան պատճառով: Մինչև հայերի կոտորածը, այդ հովիտը բացառապէս բնակված էր հայերով, բայց կոտորածից յետոյ քրիստոնէայ ազգաբնակչութիւնը այնքան ջաշցել է, որ միայն պատեղ այնտեղ կարելի է գտնել մի քանի գիւղեր, որոնց մէջ մնացել են միայն կանայք և երեխաներ: Տղամարդիկ կամ կոտորվել են, կամ գաղթել արտասահման: Ամերիկայում մօտ 15,000 իսրայիւրիցի հայեր կան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

21 դեկտեմբերի

ՓՕԹԻ: Կէսօրին վեց զինաւորված աւազակներ ներս վազեցին արքունական գանձարանը և հրացաններ արձակեցին գէպի առաստաղը: Օգուտ քաղելով իրարանցումից, նրանք յափտակեցին 30,000 ռուբլի և փախան, նրանց յետեւից վազեցին պահապանները, սկսվեց հրացանաձուլութիւն, որի ժամանակ մէկ աւազակ պահպանը, իսկ միւսին իրաւորվեցին:

ԿԱԶԱՆ: Կազանի գումարում պրօֆէսոր Խօրվատ մատնացոյց արեց մի չափ անկանոնութիւնների վրա, որ թոյլ է տուել քաղաքագլուխ Լէբէդէվ կամուրջ չինելու ժամանակ:

ՇԱՆԳՀԱՅ: Գերմանական վերլին գործերը նստեցին նստելու հայերին հայերին վերադարձնելու համար: Գերմանական ընդհանուր հիւպատոսը հրաժեշտի ճառ արտասանեց:

Անգլո-չինական ընկերութիւնը Շէնի հետ նոր դաշնագիր կապեց՝ երկաթուղի կառուցանելու համար Շանգհայից մինչև Նանկին:

ՎԻԵՆԱ: «Neue Freie Presse» լրագրի խօսքով, ռուսաց դեսպանութեան մօտ չլրանեցութեամբ հաւատացնում են, որ Լամարգորֆ ճանապարհ է ընկնում ամենալաւ տալաւորութիւններով: Մինիստրը զգացված է կայսրի ընդունելութեամբ:

ՉԻԼԻ: Յանկարծ սկսեցին գործել հինգ հրաւորչներ:

ՏԱՆԻՔԻ: Պօստը չէ յանձն անում պատասխանաւորութիւն պատուիրած նամակներ հասցնելու համար: Ստացված է հեռագիր, որ սուլթանի գրութիւնը կրիտիքական է: Աւելի քան 10,000 հիշանկեր ձեցնում, որոնք հեռու էին սուլթանական կառավարութեան անարգաւորութեան և ընտելութեան տակ, հակամիտ են օգնելու թեկնածուին: «El Liberal» հաղորդում է լուր, որ թեկնածուն ներս խուժեց մեջ և բարեկամաբար ընդունվեց:

ՊԱՐԻԶ: «Soyuzoklan»-ի և դուխօրներ» վերնագրով «Figaro»-ի յօդուածը անկողմնապահ կերպով պատմում է դուխօրների գրութիւնը Ռուսաստանում և Կանադայում, ուր ստիպված եղան համանման միջոցներ գործ դնել ֆանատիկների պրօպագանդան դարձրեցնելու համար: «Figaro» տպում է, որ «սոյուզոկաններ»-ի կարող է վտանգաւոր դեր խաղալ և քաղաքային ազդեցութիւն ունի:

22 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յայտարարվում է Բարձրագոյն չորհրդակալութիւն տաւրիկեան նահանգապետ Տրէպովին օրինակելի կարգապահութեան համար Շայտայում և նրա չլրանեցութեան նորին Կայսերական Մեծութեան Լիվադիա եղած ժամանակ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան վարչութեան ենթակայ բարձրագոյն դպրոցների վերակազմութեան համար կազմված յանձնաժողովի գործունէութիւնը շարունակվեց 79 օր և դեկտեմբերի 18-ին աւարտեց իր նիստերը: Մշակված կանոնները կը յանձնվեն Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան համապատասխան կօլլեգիական օրգանների ընտելութեանը:

ԱՄՆԱՐԱՆ: Եկող տարի «Закавказье» լրագրին կից լրջա կը տեսնի առաջին պարբերական հրատարակութիւնը պարսկերէն լեզուով, որը նպատակ կունենայ ռուսաց ազդեցութիւնը տարածել չինիային Պարսկաստանում և զարգացնել առևտրական յարաբերութիւնները:

Կ. ՊՈԼԻՍ: Բենդեր-Աբասում խօրեա է. ամեն օր մեռնում են 10-ից մինչև 15 մարդ: ՎԱՇԻՆԳՏՈՆ: Հրատարակված է սենատը մտցրած նախագիծը տրէսմանի դէմ: ՖԻՆԱՆՑԻՆԻՍ ՄԱՅԻՆ՝ ՎՐԱ: Օտանեան բանակի զինակցօրը անգեկացրեց մեծ վեզիրին, թէ ինքն նշանակվել է Րուսիէի ներկայացուցիչ պետական հարկերը միացնելու վերաբերմամբ:

23 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Արտաքին գործերի մինիստր Լամարգորֆ ստանձնեց մինիստրութեան վարչութիւնը:

Վախճանվեց Կայսերական թատրոնների յայտնի արտիստ Սազօօֆ:

ԼԱԳՈՒԱՅՐԱ: Առաւօտեան առանց զինաւորված զինադրութեան գերմանական զօրքերը գրաւեցին Պուէրտօ-Կաբէլլի մաքսատունը:

ԼԱԳՈՒԱՅՐԱ: Այստեղ արձակվեցին ծովափնայ պահապանները: Առում են, որ երկու շարթի մաքսատունը կը փակվի: Հարիւրաւոր մարդիկ առանց աշխատանքի մնացին: Վախնում են անկարգութիւններից: Անգլիական «Tribune» նաւի հրամանատարը հարորդեց պրէֆէկտին, որ նրա վրա է դնում անգլիական, գերմանական և իտալական նպատակների ապահովութեան պատասխանատուութիւնը:

ՍՕՅԻԱ: Ազգային ժողովը, 1903 թիւ բիւրո-ժէտը քուէարկելուց յետոյ, յետագեց նիստերը մինչև յունվարի 10-ը: Եկամուտները հաւասար են 98,017,100 ֆրանկի, ծախսերը 97,753,910 ֆրանկի: Զինւորական մինիստրութեան բիւրօ-ժէտը ընդունվեց առանց վիճաբանութիւնների, չը նայելով որ ծախսերը մեծացրված են երեք միլիոնով:

ՍՕՅԻԱ: Այստեղ պատրաստվում են տօնելու ռուսաց զօրքերի օգնութեամբ ազատվելու քան և հնգամեակը Մակեդոնիայում շարունակվում են յուղմունքները, մանաւանդ Կապուրեան և Զէյդաստարան կաղաւորները, Զուլաշան և Կազալում կարգը նոյնպէս չէ վերականգնված:

ՊԱՐԻԶ: Սենատի առաջին հերթի ընտրութիւնների հետեւեք. երկրորդ անգամ ընտրված են պահպանողականներ 7, պրօգրէսիստներ 18 (նոր—1), հանրապետականներ 8 (նորերը—7), արմատականներ 20 (նորերը—6) և արմատական-օգիստականներ—5: Լինելու են 23 կրկնաքուէարկութիւններ: Սենատի երկրորդ հերթի ընտրութիւնները, 23 տեղեր տուեցին 20 վերջնական ձայնատուութիւններ, համարապետականներ, պրօգրէսիստներ և ազատամիտներ ընտրված են նորից 2 (նոր—2), հանրապետականներ 3, արմատականներ 2 (նորերը—6), արմատական-օգիստականներ 2 (նորերը—2): Մնում են երեք կրկնաքուէարկութիւններ:

ՄՈՒԿԻՆԷ: Սկսվեց պալատների յանձնումը չինական կառավարութեան:

ՊԵՏՐՕԶԱՎՈՒՄ: Նահանգական ժողովը որոշեց առանձին տախտակի վրա նիստի դաշիւնում դնել թագաւոր Կայսրի խօսքերը, առված օգոստոսի 29-ին Կուրսկի զենամուօյի ներկայացուցիչներին:

ՊԱՐԻԶ: Սենատորներ են ընտրված Կօմբ և ֆինանսների մինիստր Րուսիէ:

1-21